

ԺԱՆՆԱ ԲԵԳԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԿ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»
ՊԱՏՄԱՎԵՊԸ*

Բանալի բառեր՝ գեղագետի հայեցակարգ, պատմավեպ, գեղարվեստականացում, գահակալության ժամանակաշրջան, միջանձնային հարաբերություններ, պատմական փաստ, հոգու դրամատիզմ, դիվանագիտական ճկնություն, էթնիկական ընդհանրություն:

Հ. Խաչատրյան - գեղագետի հայեցակարգի հիմնական ելակետերը դրսևորվում են «Տիգրան Մեծում» և շարունակվում նրա հետագա պատմավեպերում: Գնալով հայոց հեթանոս ժամանակաշրջանի գեղարվեստական յուրացմանը՝ հայ պատմավիպասանության մեջ գրողը փաստորեն «Տիգրան Մեծով» է հարթում հայոց վաղնջական ժամանակների գեղարվեստականացման ճանապարհը, ինչով և վեպը արժևորվում է հայ գրականագիտության մեջ: Մի շարք գրականագետներ՝ Էդ. Ջրբաշյան, Ս. Սարինյան, Ս. Արզումանյան, Գ. Անանյան, Զ. Ավետիսյան և ուրիշներ, շեշտում են Հ. Խաչատրյանի վիպասանության այդ առանձնահատկությունը: «Առաջին անգամ Հ. Խաչատրյանն է լայն կտավի վրա ներկայացնում մեր հեթանոս նախնիների կյանքը», - նշում է գրականագետ Գ. Անանյանը: (1)

Թերևս, Հ. Խաչատրյանի հետագա և ոչ մի վեպ գրական և ընթերցողական շրջաններում այնպիսի անմիջական արձագանքների չի արժանացել, ինչպես «Տիգրան Մեծը»: Սա գրական տեսանելի ու արժևորված մուտք էր: «Հ. Խաչատրյանն ունի պատմավիպասանին խիստ անհրաժեշտ երևակայություն: Նա պատմական մի փոքրիկ տեղեկությունը կարողանում է գեղարվեստական ընդարձակ պատկերման նյութ դարձնել կամ ստեղծել աղբյուրներում չեղած, բայց վեպում անհրաժեշտ դեպքի, իրադարձության պատկերումն այնպես, որ նա ունենա պատմական հավանականություն», - գրում է գրականագետ, լեզվաբան, մատենագետ Ռ. Իշխանյանը: (2)

Հ. Խաչատրյանն իր առաջին վեպի համար նյութ է ընտրում հայոց պատմության համար բացառիկ մի ժամանակաշրջան՝ մ.թ.ա. առաջին դարը, երբ Հայաստանը հասնում է իր հզորության գագաթ-

*Հոդվածն ընդունվել է 10.11.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

նակետին՝ շնորհիվ արքայից արքա Տիգրան Մեծի (95-55): Քառասուն տարի գահակալած Տիգրան Մեծը Առաջավոր Ասիայում միակ պետական գործիչն է, որ կարողանում է կանխել Հռոմի և Պարթևստանի նվաճողական ծագումները՝ օգտագործելով ռազմական հզորությունն ու դիվանագիտական ճկունությունը: Տիգրան Մեծի գահակալության ժամանակաշրջանի մասին հարուստ և հակասական պատմանյութ է պահպանվել, որի օգտագործումով հայ և օտար պատմաբաններն առանձին ուսումնասիրություններ են գրել Տիգրան Մեծի և նրա գահակալության մասին: Պատմաբան Ռ. Մանասերյանը «Տիգրան Մեծ, Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94-64թթ.»(3) աշխատության մեջ Տիգրանին է վերագրում Տիրանից հետո Հայաստանի հետագա հինգ դարերի անկախության ապահովումը, ընդհուպ մինչև 428 (մ.թ.) թվականը: Եթե մ.թ.ա. առաջին դարում Հայաստանը կուլ գնար արևելքից՝ Պարթևստանի, արևմուտքից՝ Հռոմի ագրեսիային, ապա հայ ժողովուրդը՝ որպես պատմական-էթնիկ երևույթ, հազիվ կարողանար պահպանել քաղաքական, մշակութային ինքնությունն ու ամբողջականությունը: Հինգերորդ դարի սկզբին, երբ կործանվում է Արշակունյաց հարստությունը (428թ.), հայ ժողովուրդը՝ որպես էթնիկ ամբողջություն, բացարձակ կայացած էր, այլապես պարսկական ուժացման քաղաքականության դեմ չէր բարձրացվի 451թ. ապստամբության դրոշը, և հետագա դարերի անհաշիվ փորձությունների միջով անցնելով՝ մեր ժողովուրդը չէր կարողանա պահպանել իր ազգային դիմագիծը, հասնել մեր օրերին: Մեր ժողովրդի հիշողության մեջ մշտաբան են ծովից ծով Հայաստանի, ուրեմն և՛ Հայաստանը ծովից ծով դարձնողի կերպարը:

«Տիգրան Մեծը» ծրագրած վեպ է: Գրողը նախապես հաշվի է առել գաղափարական այն հիմնական շեշտադրումները, որոնք պիտի արտահայտվեին վեպում: Սրանով և գեղարվեստական երկի տարածության և ժամանակի ընդգրկումությամբ է պայմանավորվում վեպի ծավալը, որը չի գերազանցվում հեղինակի հետագա վեպերում: Սրանցով է պայմանավորվում նաև վեպի դանդաղ ընթացքը: Վեպում իշխողը նկարագրական եղանակն է, մեծ տեղ է գրավում հեղինակային խոսքը: Գրողի հետագա՝ «Էրեբունի», «Քերթողահայր», «Խաշխաշ», «Երվանդ Սակավակյաց» վեպերին համեմատ՝ սակավ են գրողական երևակայության պոթելումները: Գրականագետ Հ. Թամրազյանը «Խորհրդահայ գրականության պատմություն» աշխատության մեջ, արժևորելով Ստ. Զորյանի և Դ.Դեմիրճյանի պատմավիպասանությունը, նշում է. «Երկու հեղի-

նակներն էլ, յուրաքանչյուրը յուրովի, փորձել են գտնել հայ ժողովրդի բարոյական կշիռը և ավանդը պատմության մեջ: Նպատակին հասնելու համար նրանք Հայաստանը պատկերել են միջազգային մթնոլորտի քաղաքական, դիվանագիտական, տնտեսական բազում կապերի մեջ»: (4) Այս դիտարկումը կարելի է տարածել «Տիգրան Մեծի» վրա, հավելել գեղարվեստական մի շարք կարևոր առանձնահատկություններ, որով ընդգծվում է վիպասանի գրողական անհատականությունը: Այսքանով հանդերձ, բարձրանում է «Տիգրան Մեծի» գեղարվեստական, գեղագիտական ու ճանաչողական արժեքը՝ նորագույն շրջանի հայ գրականության պատմության մեջ: Գրականագետ Զ. Ավետիսյանը, խոսելով Հ. Խաչատրյանի պատմավիպասանության մասին, ընդգծում է. «Միանգամայն դրվատելի է գրողի նվիրումը, նրա քաղաքական, հայրենասիրական ձգտումը, մեր ժողովրդի ասպետական քաղաքակրթիչ ու հերոսական պատմությունը բազմափառ ընթերցողներին հասցնելու գործում, անկախ այն բանից՝ տաղանդի ինչ մակարդակով է հեղինակը հասնում իր նպատակին, իր խնդրի իրականացմանը, մանավանդ, որ անիմաստ է բանավիճել նրա տաղանդի հետ»:(5)

«Տիգրան Մեծը» բաղկացած է հիսուն գլխից: Գրողի հետևողական բևեռացումը գլխավոր հերոսն է: Վեպը ձեռք է բերում բազմարժեքություն՝ սյուժետային գլխավոր և երկրորդական գծերով, բազմաթիվ ինտրիգներով, կերպարներով ու կոնֆլիկտներով, լեզվամտածողության առանձնահատկություններով, իմաստավորմամբ: Գրողն ապահովում է նյութի բազմազանությունը: Առաջ են գալիս գաղափարներ, ամբողջանում են կերպարները, հասարակական և հոգեբանական տիպերը: Վեպի առաջին՝ «Յոթանասուն հովիտներ» (6) գլխում ստեղծվում են իրավիճակներ, որոնցով պայմանավորվում են գլխավոր հերոսի հետագա գործողությունները: Պարթև Միհրդատ Մեծի պատանդ Տիգրանը, երբևէ չհաշտվելով իր կարգավիճակի հետ, չհանդուրժելով պալատական ստորացումները, գալիս է հաստատ որոշման՝ մի օր անպայման վրեժխնդիր լինել. «Երբ ինքը գահ բարձրանա, հարյուր հազար հայկական այրուձիով առաջին հերթին կարշավի պարթևների վրա և ծունկի կբերի նրանց: Հետո կարշավի դեպի Անտիոք, կգրավի Մեծ ծովի ափերը: Հռոմը կդողա հայկական հզորությունից և ետ կքաշվի միջինասիական իր պրովինցիաներից»:(7) Ստեղծված հակադրությանը գումարվում են նորերը: Պատանդությունից ազատվելու և հոր թափուր գահին տիրանալու համար Տիգրանը թանկ փրկագին է տալիս՝ Միհրդատ Մեծին զիջելով հայոց Յոթանասուն հովիտները:

րը: Նախապայմաններ են ստեղծվում հետագա բախումների համար: Տիգրանի պատանդության տարիների հոգևոր սնունդը եղել են պապի՝ Մեծ Արտաշեսի պատգամները. «Չհաջողվեց ինձ, ով պայազատող հայկազուն, միավորիլ հայոց ծվատված հողերը: Փորձիր այդ բանն անել ինքդ, և եթե քեզ էլ չհաջողվի, ավանդիր քո որդոց նույնը: Կկորչի աշխարհի վրա հայ ազգը, եթե ի մի չծուլվի, կկորչեն հայրենախոս մեր լեզուն և երգը, եթե հայերը շարունակեն անջատված մնալ իրարից»:(8) Պապի տեսականը ուղեկցում է Տիգրանին՝ վիպական ժամանակում: Արտաշես արքայի կերպարն ամբողջանում է Տիգրանի տեսականի մեջ: Հզոր Հայաստանի գաղափարը, որն ամեն ինչից վեր է, Տիգրանը ժառանգում է նրանից: Գլխավոր հերոսի հետագա բոլոր գործողությունները նպատակաուղղված են այդ գաղափարի իրականացմանը: Վիպական իրադարձությունների հիմքում ընկած է պատմական ճշմարտությունը: Դեպքերը ժամանակագրորեն հաջորդում են իրար, վիպական գործողությունների մեջ են ներքաշվում նոր պատմական անհատներ: Ընթերցողի առաջ բացվում է նրա ստեղծած աշխարհը, որը գունավորվում է նրա գեղագիտության երանգներով: Այդ աշխարհն իր կենսունակությամբ ու հավաստիությամբ գրավիչ է ու իրական: Շարունակ վերընթացի մեջ է գրողի գեղագիտական իդեալը: Հ. Խաչատրյանը ստեղծում է գլխավոր հերոսի մարդկայնորեն բարդ կերպարը: Պահպանելով դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը՝ գլխավոր հերոսին վեր է հանում որպես իր նպատակներին հետամուտ քաղաքական անհատ: Ժամանակաշրջանին ներհատուկ քաղաքական դավադրությունները հերոսին առնում են իրենց մեջ: Հռոմ-Հայաստան հարաբերությունները մասնավորվում են Տիգրան Մեծի, Լուկուլլոսի, Պոմպեոսի, Բագարատի, Կրտսեր Տիգրանի կերպարների միջոցով: Վեպում գործողությունների զարգացմանը նշանակալիորեն ներագրում է Հայաստան-Պոնտոս հարաբերությունների գեղարվեստականացումը: Ստեղծվում են Տիգրան-Միհրդատ Եվպատոր, Տիգրան-Կլեոպատրա գծերը, որոնցից հետագայում բխում են Տիգրան-Ջարեհ, Տիգրան-Միջնեկ, Տիգրան-Կրտսեր հարաբերությունները: Տիգրանն անդամ է իր նպատակին: Վեպի առաջին մասում Տիգրանը բացարձակապես հերոսականացված է: Նա հանդես է գալիս որպես պետական խոհուն մտածողության տեր այր: Առաջին հերթին զբաղվում է բանակաշինությամբ: Լավ է տիրապետում սրի և դիվանագիտության լեզվին: Միհրդատ Եվպատոր և Տիգրան համագործակցության արդյունքում պարթևներից ետ են բերվում հայոց Յոթանասուն հովիտները,

գրավվում Միգդոնիան, Օսրոյենեն, Կորդուքը: Տիգրանը պարթև Հրահատ արքային զրկում է արքայից արքա տիտղոսից՝ ինքը նվաճելով այն. «Աղծնիքում, Խուլփի ափին բոցկտաց հայոց հաղթության ատրուշանը: Թիթեռների պես նրա շուրջը սկսեցին պտտվել Միջագետքի բոլոր մեծ ու փոքր արքաները, զորապետներն ու մեծատունները»:(9)

Արքայից արքան զբաղվում է երկրի ներքին շինարարությամբ: Կառուցում է իր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտը, արքունիքը տեղափոխում այնտեղ: Իրականանում է պապի՝ Արտաշեսի մեծ երազանքը. միավորվում են հայոց հողերը, տարածվում է Տիգրան Մեծի հռչակը, նրա ոտքն են գալիս փոքր տերությունների արքաները, ինքնական հպատակվում նրան:

Հեղինակը բարդ քաղաքական ու միջանձնային հարաբերություններ է ստեղծում, առավել ընդգրկուն դարձնում երկի գաղափարական բազմաշերտությունը:

Տիգրանի մեջ դիվանագետը տեղի է տալիս հայի վեհանձնությունն ու արժանապատվությունը կրողին:

Գործողություններն արագ են զարգանում: Բախվում են հայոց և հռոմեական բանակները: Հայաստանում գլուխ են բարձրացնում կենտրոնախույս ուժերը՝ Տիգրանից դժգոհ ավագանին՝ որդու՝ Ջարեհի գլխավորությամբ: Գրողը դրվագներ ու միջադեպեր է ստեղծում՝ ընդգծելու ընդհանուր դժգոհության մթնոլորտը: Բռնագաղթած այլազգի բնակիչների մատնությամբ ընկնում է Տիգրանակերտը: Ավերվում ու թալանի է ենթարկվում Տիգրանի երազանքի քաղաքը: Որքան էլ Տիգրանը գրողի սիրած հերոսն է, չի գունազարդվում նրա փառքը: Պատմական փաստի և երևակայության զուգորդումը մնում է հավաստիության սահմաններում: Մռայլ անպեր են կուտակվում հերոսի շուրջը: Անգամ հայրենի բնությունը հաշտ չէ և ճիշտ չի ընկալում նվիրյալ զավակին:

Բազում հաղթանակներ կռած հերոսական Տիգրանը հոգու դրամա է ապրում: Հերոսի ապրած կյանքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի: Առաջին շրջանում ընթերցողի առաջ կանգնած է հաղթական, ոչնչի առաջ չընկրկող, խոհուն ու տրամաբանված վարքի տեր դիվանագետ քաղաքական այրը: Երկրորդ շրջանում հերոսը բախվում է ճակատագրի հարվածներին: Նրա հոգում տիրում է երկվությունը: Տիրակալ Տիգրանը կանգնում է հայր Տիգրանի դեմ: Ամեն ինչ ունի և ոչինչ չունի: Նրան դավել են սեփական որդիները, տիկնանց տիկին Կլեոպատրան: Գրողը նրան չի հասցնում ողբերգականության: Բոլոր ժամանակներում

նրա մեջ խոսում է խոհուն ու սթափ միտքը: Նա ամեն ինչ գոհել է հանուն գերագույն նպատակի՝ Միջերկրայքում միջազգայնորեն հաստատված Հայաստանի: Տիգրանը գիտակցում է, որ ինքը սերունդներին կտակում է ոչ միայն փաստացի կայացած երկիր, այլև նման երկրի գոյության խորհրդանիշն է ներարկում ազգի արյան հիշողության մեջ:

Դժվար չէ գիտակցել հեղինակի գաղափարական շեշտադրումը. կուլ գնալու վտանգը միշտ է կանգնած հայի առաջ, պետական ճիշտ կողմնորոշումը բոլոր ժամանակներում օրավուր խնդիր է հայոց համար: Վեպում խորն է պատմության և մարդու փիլիսոփայությունը: Պատմությունը միշտ էլ իր անակնկալներն ունի: Պատմական հզոր անհատի ազգապահ գործունեությամբ հնարավոր է հսկել իրավիճակների ընթացքը: Գլուխ առ գլուխ վեպում մանրամասնվում են գլխավոր հերոսի գործունեության խորհուրդները: Գեղարվեստական գունեղ նկարագրություններով է գրողը յուրացնում պատմական փաստանյութը, հատկապես՝ գլխավոր հերոսի հոգու դրամատիզմը, դիվանագիտական ձկունությունների նոր խորքն ու խորհուրդը, դրամատիկ իրավիճակներում մտքի սթափությունն ու ուժը: Հերոսը հաճախ է կանգնում ինքնագնման առաջ: Գրողը երկի ներքին լիցքերով հարստացնում է հերոսի ներաշխարհը: Տիգրանը ժամանակի հրամայականով առաջնորդվող գահապաշտ չէ, այլ պրպտող, բարոյ քաղաքական իրավիճակներում խելամիտ ելք որոնող այր. «Այժմ արդեն ճակատամարտով չես կարող փրկել Հայքը: ...Այժմ պետք է հեծնել դիվանագիտության նժույգը և մարտի մտնել Պոմպեոսի, պարթև Հրահատի և դավաճան որդու հետ»: (10) Քաղաքական նոր իրավիճակում Տիգրանն իրատեսորեն է գնահատում իր ժամանակն ու հնարավորությունները: Նա չի կարող երկիրը տանել արկածախնդրության ճանապարհներով: Քաղաքական համեմատաբար խաղաղ պայմաններում են անցնում հերոսի վերջին տարիները: Հակառակ քաղաքական խաղաղության՝ խռովահույզ է հերոսի հոգին: Ապրած կյանքի ու գործողությունների արժևորումը հերոսի կողմից բացում է կերպարի հոգեբանական խորքը: Արքայից արքայի կյանքի վերջին տարիներն անցնում են վերակառուցվող Տիգրանակերտում: Որդիների՝ Զարեհի և Միջնակի, Կլեոպատրայի ողբերգական վախճանների մղձավանջը մշտապես ուղեկցում է նրան, հոգեկան տվայտումների պատճառ դառնում:

Հոգու դրամա ապրող Տիգրանը մի արդարացում ունի: Իր բոլոր քայլերն ուղղված են եղել Հայքի պետական կայացմանը: Վեպի վերջին գլուխներում Տիգրանի կերպարը դրամատիկ շեշտադրում

է ստանում: «Խորհրդավոր դամբարանը» (11) գլխում Տիգրանը իրեն տեսիլքված պապին՝ Արտաշեսին, բացում է իր հոգու բազմախորշ ապրումները. «Քո մեծության շվաքի տակ չհանգստացա ոչ մի օր: Պաշտեցի աստվածներին հայոց և պապերին իմ հզոր, պաշտեցի երկիրն իմ հայկյան և որդան կարմիրը: Ասքանագյան մեր նժույգները հասան Մեծ ծովի, Եվքսինյան Պոնտոսի և Կրկանայի ափերը: Ես հրամայեցի, որ Հայքի եզրապահը դառնա հայոց լեզուն: Ես Մեծ Հայք են ժառանգում իմ հետնորդներին, բայց չեն պահանջում, որ նրանք հատուցեն ինձ փառքի հուշասյունով: Կցանկանայի, որ ծայրակալ գավառներից հայերենը ոչ մի քայլ չընկրկեր դեպի երկրի խորքերը: Ահա իմ միակ պատգամն ու պահանջը»: (12) Աշխարհակալ Տիգրանը զգացմունքների մեջ նույնքան մարդ է ու մարդկային, որքան սովորական մահկանացուն: Կերպարի հոգեբանական զարգացումը շարունակվում է մինչև վեպի վերջին դրվագը: Արքայից արքան փակել է տալիս Մթին լեռներում իր համար կառուցած դամբարանը: Հայոց արքունականներին պատգամում է. «Ինձ կթաղեք երկրի վրա, Հայքին ու հայերին մոտիկ, իմ հոգին արթուն կմնա աշխարհում և կուղեկցի բոլոր հայերին, որտեղ էլ լինեն նրանք: Ես իմ սիրտը կբաժանեմ բյուր անգամ հազար բյուր մասերի և կվերածնվեմ ամեն հայի հետ: Ես արթուն կպահեմ հայկյան ոգին մինչև գալիք բոլոր ժամանակների եզրապահ դարերը...»: (13) Իր հերոսականությամբ և դրամատիզմով Տիգրան Մեծի կերպարն առանձնանում է վեպի կերպարային համակարգում: Հերոսին միայն իր ապրած ժամանակը չէ, որ պայմանավորում է: Նա իր վրա կրում է անցյալի ու գալիքի ազդակները: Անցյալը պարտավորեցնում է, ապագան՝ զգաստացնում: Այս առումով «Տիգրան Մեծի» ժամանակային ընդգրկումը սահմանային եզր չունի: Այն համընկնում է մեր ժողովրդի գոյության սահմանին: Սա վեպի լուրջ նվաճումն է:

«Տիգրան Մեծն» իր ծավալին համապատասխան խիտ և բարդ կերպարային համակարգ ունի: Տիգրան Մեծին զուգահեռ վեպում զարգանում և կայանում են Ասպետ Բազարատի, Մեհրուժանի, Միհրդատ Եվպատորի, Լուկուլլոսի, արքայամայր Երանուհու, Կլեոպատրայի, Ջոսիմայի, Արտավազդի, Կրտսերի և այլոց կերպարները:

«Տիգրան Մեծի» կերպարային համակարգում հոգեբանական ներքին տարողունակությամբ Տիգրան Մեծի կերպարից հետո առանձնանում են Կլեոպատրայի և Կրտսեր Տիգրանի կերպարները: Հանձին Կլեոպատրայի, հեղինակը վեր է հանում հոգու բազմախորշ ծալքերով կնոջը: Կլեոպատրան վերջնական հաշվով զոհ է, ապերջանիկ կին և մայր:

Վերընթաց զարգացմամբ է վիպական ակտիվ գործողությունների մեջ ներառվում Կրտսեր Տիգրանը:

Գրողի սիրո փիլիսոփայությունն ինքնատիպ դրսևորում է ստանում վեպում: Հեղինակը ստեղծում է մի քանի սիրո զուգահեռներ՝ Բագարատ-Ջոսիմա-Բեֆորես, Պաճույճ Տրպատունի-Շուշան, Գնել-Խուշուշ: Ինչպես հատուկ է հեղինակին, սիրո հարաբերություններում իշխողը մաքուրն ու երազայինն է, հավատարմությունը, սպասումը:

Վեպում բազմաթիվ զուգահեռներ են ստեղծվում, որտեղ հստակ բնավորություններով դրսևորվում են սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներ: Գրողն այս ձևով գծում է ժամանակի բարդ սոցիալական խճանկարը՝ գեղարվեստականացնելով ստրկատիրական Հայաստանը՝ իր հասարակական բազմաշերտ դրսևորմամբ: Գրական երկը ուսումնասիրության տեսանկյունից բարդ լինելով հանդերձ, բազմաշերտ է, և տեսանելի են գրողի միտումները: «Սևուկի սպիտակ խալը» (14) գլուխն այս տեսանկյունից ամբողջական խտացում է՝ ստրկատիրական Հայքի շինականի կյանքի և ապրելակերպի գեղարվեստականացմամբ: Գրողի բացահայտ համակրանքն ու սերն իրենց հողի համար պայքարի ելած հայոց կողմն է: Հռոմի նվաճողական նկրտումները մի օր վերջ կունենան, և կիավերժի Հայքն ու հայությունը: Այս հավատքի մեջ հերոսանում է հայոց ժամանակը:

Ստեղծվում է հայոց մշակութային դաշտի պատկեր-կերպարը, միտում, որը շարունակվում է վիպասանի հետագա երկերում: Հայկականն ու հայեցին վեպում ընդհանուր հոգածության առարկա են: Տիգրան Մեծը կարևորում է Հայքում հայերեն խոսելու հանգամանքը: Նա հավատացնում է, որ երկիրը հնարավոր է հավերժել միայն երկու զենքով: Որդու՝ Արտավազդի այն հարցին, թե որոնք են այդ զենքերը, արքայից արքան պատասխանում է. «Հայոց լեզուն և հայկական սուրը: Հիշիր, տղաս, սուրը դու կարող ես պատյանի մեջ դնել ու վերստին հանել, կոտրելու դեպքում՝ կռել նորը: Սակայն եթե սխալվես ու հայոց լեզուն դնես պատյանի մեջ, այլևս չես կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերագտնել բոլոր կորուստները, բայց եթե կորցնես մայրենին, կկորցնես և՛ քեզ, և՛ վարքը հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան Ասքանազյան մեր ազգի»: (15) Գրողը մի առանձին հետաքրքրությամբ է ներկայացնում հայոց կենցաղավարության մանրամասները: «Տիգրան Մեծում» բազմաթիվ են ասք-պատումները, միտում, որ իր զարգացումն է ունենում գրողի հետագա պատմավեպերում:

«Տիգրան Մեծը» Հ. Խաչատրյանի առաջին վեպն է, ուր ամբողջանում է հայոց էթնիկական ընդհանրության պետական և մշակութային կայացումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրական թերթ, Երևան, 1967, հոկտեմբերի 6:
2. Խաչատրյան Հ.: Գրական հիշատակարան, էջ 11:
3. Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ, Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94-66թթ., Երևան, «Հայաստան» հրատարակություն, 1987թ.:
4. Թամրազյան Հր., Խորհրդահայ գրականության պատմություն, «Լույս» հրատարակություն, Երևան, 1984թ., էջ 563:
5. Ավետիսյան Զ., Գեղագիտական մտածողության հետքերով, «Սովետական գրող» հրատարակություն, Երևան, 1985թ. էջ 98:
6. Խաչատրյան Հ., Տիգրան Մեծ, էջ 3:
7. Նույն տեղում, էջ 15:
8. Նույն տեղում, էջ 17:
9. Նույն տեղում, էջ 125:
10. Նույն տեղում, էջ 443:
11. Նույն տեղում, էջ 611:
12. Նույն տեղում, էջ 614:
13. Նույն տեղում, էջ 628:
14. Նույն տեղում, էջ 69:
15. Նույն տեղում, էջ 615:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՊԱՏՄԱԿԵՊԸ

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հոդվածում նշված է, որ Հայկ Խաչատրյան գեղագետի հայեցակարգի հիմնական միտումները դրսևորվում են «Տիգրան Մեծ» պատմավեպում և շարունակվում նրա հետագա գործերում: Գնալով հայոց հեթանոսական ժամանակաշրջանի գեղարվեստական յուրացմանը՝ գրողը փաստորեն «Տիգրան Մեծով» է հարթում հայոց վաղնջական ժամանակների գրականացման ճանապարհը, ինչով և արժևորվում է արդիի հայ գրականագիտության մեջ: Վեպի ծավալը, որը չի գերազանցվում գրողի հետագա գործերում, պայմանավորված է պատմանյութի ընդգրկությամբ, վիպական ժամանակով և տարածությամբ:

РЕЗЮМЕ

ИСТОРИЧЕСКИЙ РОМАН А. ХАЧАТРЯНА "ТИГРАН МЕЦ"

ЖАННА БЕГЛАРЯН

Ключевые слова: концепция эстетика, исторический роман, период королевства, личностные отношения, исторический факт, духовный драматизм, дипломатическая ловкость, этническая обобщенность, охудожествление, языческий период.

В статье указано, что основные завязки в концепции А. Хачатряна-эстетика проявляются в "Тигране Меце" и продолжают в его исторических романах. Приступая к художественному освоению языческого периода в современном армянском историческом романе, писатель посредством "Тиграна Меца" фактически прокладывает путь к охудожествлению армянских стародавних времен, чем романист и ценится в армянской литературе. Объем "Тиграна Меца", который не превышает объемы последующих романов автора, обусловлен емкостью исторического материала, охватом пространства и времени художественного произведения.

SUMMARY

HAYK KHACHATRYAN'S NOVEL "TIGRAN THE GREAT"

ZHANNA BEGLARYAN

Key words : a aesthetic concept, historical novel, aesthetical, the period of reign, international relations, historical fact, spiritual drama, diplomatic flexibility, ethnic commonality.

The article notes that the main aesthetic principles of Hayk Khachatryan are revealed in "Tigran the Great" and further in other historical novels. Having examined the pagan periods the great author through "Tigran the Great" showed the way of introducing the ancient Armenian history aesthetically thus becoming valuable in the literary science.

The volume of "Tigran the Great" is conditioned by the capacity of the historical material, the spreading of the work and time, it is not surpassed in the author's other novels.